«Երևանի Ս.Խանզադյանի անվան հ.184 ավագ դպրոց» ՊՈԱԿ

# «Պատանի աշխարհագրագետ» օլիմպիական խմբակի ծրագիր

10-րդ դասարան

(շաբաթական՝ 2 ժամ, տարեկան՝ 68 ժամ)

2023-2024 ուստարի

Աշխարհագրության ուսուցչուհի՝ Հասմիկ Գաբրիելյան



ԵՐԵՎԱՆ 2023

## 1. Ներածություն

Ծրագիրը նախատեսված է հանրակրթական դպրոցների 10-րդ դասարանի սովորողների ուսուցման համար և աշխարհագրություն սովորելու մեծ մոտիվացիա ունեցող սովորողների հետ աշխատելու առարկայական օլիմպիադային արդյունավետ մասնակցության նախապատրաստելու համար:

Ծրագիրն իրականացվում է որպես պետական կրթական ստանդարտի ներդրման մաս և կարգավորվում է հետևյալ իրավական ակտով.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի 2022 թվականի փետրվարի 18-ի 05-Լ հրաման «Հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլ ընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձեւավորման ու գործունեության եւ ուսումնական նախագծերի իրականացման կարգ» ըստ որի.

Խմբակը ձևավորվում է (տարիֆիկացվում է), եթե ծրագիրը հաստատվել է տնօրենի կողմից,և առնվազն 8 սովորող դրանում ընդգրկվելու ցանկություն է հայտնել :

## 2. Նպատակը

Այս ծրագիրը դիտարկվում է որպես աշխարհագրության կիրառման համակարգ սովորողի անհատականության զարգացման գործում և ուղղված է սովորողի անձի սոցիալ-մշակութային զարգացմանը, նրա ստեղծագործական ինքնիրացմանը:

Ծրագրի արդիականությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է ուսումնական նյութի խորացմանը՝ դասընթացից առանձին հասկացություններ ուսումնասիրելու միջոցով:

Ծրագրի հիմնական նպատակն է նախապատրաստվել աշխարհագրության դպրոցականների Միջազգային, Հանրապետական օլիմպիադայի տարբեր փուլերին,

ինչպես նաև առաջին մակարդակի օլիմպիադաներին, դրանք բուհ ընդունվելիս տալիս են առավելագույն առավելություններ:

Այս խմբակում սովորելու ընթացքում սովորողները կծանոթանան աշխարհագրության դպրոցականների Յանրապետական օլիմպիադայի ձևաչափին և կհմտանան օլիմպիադայի առաջադրանքների կատարման մեջ Դասընթացի անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ դրա ուսումնասիրությունը կօգնի սովորողին գնահատել իր ներուժը կրթական տեսանկյունից:

Ծրագրի նպատակն է պայմաններ ստեղծել սովորողներին աշխարհագրության առարկայական օլիմպիադաներին նախապատրաստելու համար՝ հնարավորություն ընձեռելով ստեղծելու իրենց ուսումնական պլանը:

## 3. Ծրագրի խնդիրները

Դասընթացի հիմնական կրթական խնդիրը որոշվում է մի կողմից՝ աշխարհագրության ստանդարտի պահանջներով, իսկ մյուս կողմից՝ առարկայական օլիմպիադային մասնակցելու համար մասնագիտացված պատրաստության անհրաժեշտությամբ: Օլիմպիադային նախապատրաստվելը մեծ խթան է ուսումնասիրվող առարկայի մեջ խորը խորասուզվելու, մտահորիզոնն ընդլայնելու, տրամաբանական մտածողություն վարժեցնելու համար, սա սեփական փոքրիկ բացահայտման հնարավորություն է: Սովորողների հետաքրքրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե որքան մեծ է նրանց ցանկությունը

նոր բաներ սովորել ու աշխարհագրության ոլորտում;

Խնդիրները՝

- պատրաստել երեխաներին տարբեր տեսակի առաջադրանքների համար ,տալ առաջարկություններ դրանց վրա աշխատել ու վերաբերյալ
- կողմնորոշել սովորողներին առաջարկվող առաջադրանքների թեմաներում
- սովորեցնել ,թե ինչ պես օգտագործել տեղեկատու գրքեր և բառարաններ

• վարժեցնել սովորողի մոտ առավել տարածված խնդիրների լուծման պրակտիկա

Այս դասընթացում, բացի աշխարհագրության հիմնական դասընթացում ուսումնասիրվող ավանդական բաժիններից, առաջարկվում է ուսումնասիրել ավելի խորապես այլընտրանքային բաժիններ։

4. Ակնկալվող վերջնարդյունքները

Այս դասընթացը յուրացնելու արդյունքում սովորողները՝

1) կծանոթանան և կիմանան օլիմպիադայի տարբեր տեսակի առաջադրանքների լուծումները (թեստ, ստեղծագործական, գրավոր պատասխան պահանջող հարցեր և այլն).

2) կկարողանան ոչ ստանդարտ ձևով մոտենալ օլիմպիադայի խնդիրների լուծմանը.

3) կկարողանան օգտվել աշխարհագրության վերաբերյալ բազմաբնույթ թգրականությունից.

4) բարձր պահել առարկայական խորը գիտելիքները, կատարել սահուն սերնդափոխություն՝ ստեղծելով ավելիին ձգտող մրցունակ աշխատանքային թիմ.

5) զարգացնել սովորողների կարողությունների, ճանաչողական հետաքրքրությունների և կայուն իմացական պահանջմունքի ձևավորումը, գիտելիքների խորացումը և աշխարհայացքի ընդլայնումը, հայրենասիրության, գեղագիտական, էկոլոգիական ճաշակի և լիարժեք անհատի ձևավորումը.

6) ներառել նաև պետական չափորոշչի վերջնարդյունքները.Մ 1, Մ 3, Մ 4, Մ 5, Մ 6, Մ 7,Մ 8, Մ 11, Մ 12, Մ 13, Մ 14,

Ʋ 15, Ʋ 21, Ʋ 22, Ʋ 24, Ʋ 26, Ʋ 27, Ʋ 28, Ʋ 29, Ʋ 33, Ʋ 43, Ʋ 46

7) այս ծրագիրը նախատեսում է խմբակի շաբաթական 2 ժամ: Թեմատիկ պլանավորումը կազմված է տարեկան պլանավորմամբ, բաղկացած է 68 ուսումնական ժամից.

5. Ծրագրի իրականացման պայմանները

Նախատեսված վերջնարդյունքներին հասնելու համար ծրագիրը նախատեսում է մի շարք անհրաժեշտ պայմաններ (հոգեբանական և մանկավարժական, կադրային, ֆինանսական, նյութատեխնիկական և այլն)՝ որոշակի գործողությունների ապահովմամբ՝

1) համատեղ բաշխված ուսումնական ծանրաբեռնվածություն՝ անհատականության վրա հիմնված (ներառյալ անկախ պլանավորման և նպատակների սահմանման հնարավորությունը, անհատականությունը ցույց տալու, «մեծահասակների» գործառույթներ կատարելու կարողությունը՝ վերահսկում, գնահատում, նյութի դիդակտիկ կազմակերպում և այլն).

2) հետազոտական գործունեություն՝ տարբեր ձևերով.

3) համակարգի օբյեկտների (տեխնիկական, մարդկային) կառավարման գործունեություն.

4) ստեղծագործական գործունեություն (գեղարվեստական, տեխնիկական և այլ ստեղծագործականություն)՝ ուղղված ինքնիրացմանն ու ինքնաճանաչմանը:

Սույն ծրագիրն իրականացնելու և նախատեսված վերջնարդյունքներին հասնելու համար դպրոցն ապահովում է կադրային, նյութատեխնիկական, ուսումնական, մեթոդական և տեղեկատվական բազա՝

1) ուսումնական և լաբորատոր տարածքներ (ԵՊՀ, Երկրաբանական թանգարան, Բյուրականի աստղադիտարան).

2) լ աբ ո ր ատո ր ս ար ք ավ ո ր ո ւ մ ն ե ր ,ն յ ո ւ թ ե ր

(ն յ ո ւ թ ատե խն ի կ ակ ան բ ազ ա,ք ար տե զ ն ե ր ,թ ե լ ո ւ ր ի ո ւ մ ,

ապար ն ե ր ի ն մ ո ւ շ ն ե ր ).

3) լ ր աց ո ւ ց ի չ գ ր ակ ան ո ւ թյ ո ւ ն

## 6. Բովանդակություն

## Ծրագիր /թեմատիկ պլանավորում տարեկան /

| N | Բովանդակություն | Նպատակ | Ժամեր | Վերջնարդյունք |
|---|---|---|---|---|
| 1 | Տիեզերքը և Երկիր մոլորակը | Ճանաչել երկրագունդը, որպես Արեգակնային համակարգի մաս Գաղափար ունենալ երկրի կառուցվածքի մասին, Երկրի օրական և տարեկան պտույտի մասին | 4 | Պատկերացնել Երկրի գնդաձևության և պտույտի հետևանքները:<br><br>Տարբերակել Երկիր մոլորակի ձևի ու չափերի առանձնահատկությունները |
| 2 | Մեր օգնական քարտեզը | Ներկայացնել քարտեզագրական կարողությունների ձևավորումը, քարտեզագրական գիտելիքների կիրառումը Լուծել խնդիրներ | 2 | Կիրառել քարտեզները առօրյա կյանքում:<br><br>Տեղագրական քարտեզի վրա որոշել ազիմուտ,<br><br>Գնահատել գլոբուսից օգտվելու կարողությունը<br><br>Կարողանա ձեռք բերել հմտություններ քարտեզների դասակարգման վերաբերյալ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | Մաթեմատիկակա<br>ն<br>գիտելիքները,<br>որպես<br>անհրաժեշտ<br>պայման<br>աշխարհագրակա<br>ն<br>ընկալումներո<br>ւմ | Կարողանալ<br>կազմել<br>քարտեզներ և<br>գտնել երկրի<br>տեղը այդ<br>քարտեզում: | 1 | Կիրառել<br>մասշտաբների<br>խնդիրներ |
| 4 | Աշխարհի<br>աշխարհագրակա<br>ն պատկերը և<br>աշխարհագրակա<br>ն մշակույթը | Զարգացնել<br>գիտելիքներն<br>ու<br>հմտություննե<br>րը<br>աշխարհագրակա<br>ն մշակույթում: | 2 | Տարբերակել<br>աշխարհագրակա<br>ն<br>մտածողության<br>և<br>աշխարհագրակա<br>ն մշակույթի<br>բաղադրիչները |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5 | Աշխարհագրական թաղանթը և մարդը | Զարգացնել գիտելիքներն աշխարհ. թաղանթի ձևի և զարգացման վերաբերյալ<br>Գաղափար կազմել աշխարհագրական թաղանթի ոլորտների փոխազդեցության մասին | 2 | Տարբերակել աշխարհագրական թաղանթի ոլորտների զարգացման առանձնահատկությունները<br><br>Առանձնացնել աշխարհագրական թաղանթի զարգացման փուլերը<br><br>Կարողանա ներկայացնել աշխարհագրական թաղանթի զարգացման կենսաբանական փուլը և |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | օրգանիզմների զարգացումն ու դրանց ազդեցությունը աշխարհագրական թաղանթի մյուս ոլորտների բաղադրիչների վրա |
| 6 | Սալերի տեսությունը, երկրի ջերմությունը | Բացատրել ինչ են պլատֆորմերը, երկրաշարժերը, գեոսինկլինալները, հրաբուխները<br><br>Նշել աշխարհագրական թաղանթի ոլորտները<br><br>Իմանալ քարոլորտի, ջրոլորտի մթնոլորտի և կենսոլորտի բաղադրիչները | 2 | Կարողանալ նշել աշխարհագրական թաղանթի առանձնահատկությունները<br><br>Կարողանա ներկայացնել աշխարհագրական թաղանթի ոլորտների փոխներթափացումը և փոխազդեցությունը |
| | «Սպիտակ ածուխ»-ջրվեժներ | Ճանաչել աշխարհի խոշոր ջրվեժները, գլխավոր գետերը, ջրամբարները | 2 | Խնդիրների լուծում 3-րդ շտեմարանից |
| | «Արհեստական ծովեր»-ջրամբարներ | | | |
| 7 | Գետերը որպես քաղաքակրթության օջախներ | Ինչ դեր են խաղացել «քաղաքակրթության» մեծ գետերը | 1 | Նշել նրանց թողած հետքերն ու ազդեցությունը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ժ ամ ան ակ ակ ի ց |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | քաղաքակրթության վրա |
| | Հայաստանի առողջարանային մարգարիտը | Բացատրել Սևանա լճի էկոհամակարգի պահպանությունը | 1 | Նշել Ազգային պարկը և բնապահպանական հիմնախնդիրները |
| | Երկրի հագուստը, կառուցվածքը | Օզոնային շերտի պատռվածքի առաջացման պատճառը և հետևանքը | 2 | Բացատրել որպես էկոլոգիական հիմնախնդիր |
| 8 | Կլիմայական առանձնահատկություն-ները | Նշել արդի կլիմայական փոփոխությունները աշխարհագրական թաղանթում | 2 | Պարզաբանել գլոբալ տաքացումը և կանխարգելումը |
| 9 | Զարգացնել մարդկանց ազգային ու մշակութային առանձնահատկությունների վրա պատշաճ վերաբերմունք և վարքագիծ | Ճանաչել մշակույթային և ազգային արժեքները | 2 | Գնահատել և պահպանել մշակույթային և ազգային արժեքները |
| 10 | Աշխարհի բնակչությունը | Բացատրել և վերլուծել միգրացիայի էությունը<br><br>Համեմատել բնակչության զբաղվածության կառուցվածքը: | 2 | Ուսումնասիրել և գնահատել բնակչության և տնտեսության տեղաբաշխումը<br><br>Բնորոշել բնակչության, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Լուծել մաթեմատիկական խնդիրներ բնակչության աշխարհագրության վերաբերյալ | 1 | բնական շարժընթաց, բնական և մեխանիկական շարժ, վերարտադրության ռեժիմ, ժողովրդագրական քաղաքականություն, միգրացիա, բնակչության կազմ, տեղաբաշխում, տարաբնակեցում հասկացությունները |
| | Քաղաքային ագլոմերացիաներ և մեգալոպոլիսներ | Նշել խոշորագույն ագլոմերացիաներն ու մեգալոպոլիսները | 2 | Իրարից տարբերել ագլոմերացիա, մեգապոլիս, մեգալոպոլիս հասկացությունները |
| 11 | Աշխարհի պատմամշակութային հուշարձանները | Նշել աշխարհի խոշոր պատմամշակութային հուշարձանները | 2 | Զարգացնել աշխարհա-ճանաչողությունը |
| 12 | Զբոսաշրջության աշխարհագրություն | Վերլուծել զբոսաշրջության զարգացման հեռանկարները ՀՀ-ում | 2 | Ներկայացնել ՀՀ զբոսաշրջության տեսակները և վայրերը, ինչպես նաև կազմակերպել ճանաչողական արշավներ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 13 | Ա2 խար հ ագ ր ակ ա ն տե ղ ան ո ւ ն ն ե ր ի և տե ր մ ի ն ն ե ր ի բ աց ատր ո ւ թյ ո ւ ն | Ո ր ո 2 տե ղ ան ո ւ ն ն ե ր ի ծ ագ ո ւ մ ն աբ ան ո ւ թյ ան ո ւ ս ո ւ մ ն աս ի ր ո ւ մ | 1 | Զ ար գ աց ն ե լ ս ո վ ո ր ո ղ ն ե ր ի ի ն տե լ ե կ տո ւ ալ մ ակ ար դ ակ ը |
| 14 | Ֆ ի զ ի կ ակ ակ ան ա2 խար հ ագ ր ո ւ թ յ ան | Պ ատկ ե ր աց ո ւ մ ո ւ ն ե ն ալ | 2 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | տերմինների բացատրություն, դասգրքից դուրս | հասկացությունների ավելի խորը իմացության մասին: | | |
| 15 | Հասարակական աշխարհագրության տերմինների բացատրություն, դասգրքից դուրս | | 2 | |
| 16 | Աշխարհագրական անունների բառարան | Նկարագրել տվյալ օբյեկտի գտնվելու վայրը: | 1 | |
| 17 | Ֆիզիկաաշխարհագրական խաչբառեր | | | |
| 18 | Հասարակական աշխարհագրական խաչբառեր | Պետություններ և քաղաքներ | 2 | Զարգացնել աշխարհագրական մտածողությունը |
| 19 | Աշխարհագրական գործիքների հետ աշխատանք | Մոտիկից ծանոթանալ գործիքների հետ աշխատելու ռանձնահատկություններին: | 2 | Կիրառել գործնական աշխատանքում |
| 20 | Աշխարհագրական քարտարաններ, Ավստրալիա և Անտարկտիդա մայրցամաքներ | Պարզաբանել սովորողի արագ մտածելու կարողունակությունը: | 2 | |
| 21 | Աշխարհագրական քարտարաններ, Հս. Ամերիկա և Հվ. Ամերիկա մայրցամաքներ | | 2 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 22 | Աշխարհի 10 ամենահարուստ երկրները | Ծանոթանալ երկրների տնտեսական աճի զարգացման պատմությանը: | 3 | Ձևավորել համակարգված գիտելիքներ և վերլուծական հմտություններ առևտրատնտեսական հարաբերությունների վերաբերյալ |
| 23 | Աշխարհի ամենաները | Սովորողի ինտելեկտի ընդհանուր զարգացում | 3 | |
| 24 | Աշխարհագրական խնդիրների վերլուծություն | Զարգացնել սովորողների մաթեմատիկական կարողությունները | 4 | |
| 25 | Դիագրամների ուսումնասիրում և գրաֆիկների կազմում | Զարգացնել սովորողների տրամաբանական վերլուծությունը: | 4 | Պատկերացում ունենալ գրաֆիկների կառուցման և դիագրամների վերլուծության մասին |
| 26 | Հետաքրքրաշարժ հարցեր աշխարհագրությունից | Ընդլայնել սովորողների կարողությունների, ճանաչողական հետաքրքրությունների և կայուն իմացական պահանջմունքի ձևավորումը և գիրելիքների խորացումը | 4 | Զարգացնել սովորողների աշխարհայացքի ընդլայնումը, հայրենասիրության, գեղագիտական, էկոլոգիական ճաշակի և լիարժեք անհատի ձևավորումը: |
| 27 | ՀՀ ռազմական աշխարհագրություն | Ձեռքբերել գիտելիքներ ՀՀ ռազմական ռազմական աշխարհագրության մասին | 4 | Վերլուծել և հմտորեն օգտագործել ռազմական գիտելիքները |

Ուսումնական նյութի յուրացման արդյունքների վերահսկումը և գնահատումը կատարվում է դասընթացավարի կողմից՝ գործնական պարապմունքների, հասկացությունների, անհատական հանձնարարությունների ներկայացման հիման վրա։

## Գրականության ցանկ


1. Աշխարհագրության դասագրքի էջերից դուրս Ն.Ա.Մաքսիմով
2. Ալֆրեդ Վեգեներ
3. Նիկոլայ Կուն
4. Ա.Խաչատրյան
5. Դպրոցական օլիմպիադաների շտեմարան, Գ.Հովհ.և Վ.Գրիգ.
6. Հետաքրքրաշարժ լեզվաբանություն Լ.Մ.Խաչատրյան
7. 1001 հարց և 1001 պատասխան Հ.Վ.Դուբախ և Ռ.Վ.Տաբեր
8. Ն.Մ.Գրոնշտեյնի աշխատանքային փորձից
9. Յուրա Հայկազի Մուրադյան բառարաններ
10. Ռուդիկ Մարգարյան
11. Պատանի աշխարհագրագետ Կամսար Ավետիսյան
12. Հետիոտն զբոսաշրջություն Յ.Հ.Մուրադյան
13. Զբոսաշրջության աշխարհագրություն Վ.Գրիգորյան և Ս.Ներսիսյան
14. Աշխարհագրության շտեմարան